ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 160- Ա **15 օգոստոսի 2017 թ.**

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 105000 /մեկ հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամ հատկացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի տարածքում տեղակայված <<Պատանի երկրապահներ>> ճամբարում հանգստացող պատանի երկրապահներին՝ թվով 100/մեկ հարյուր/ երեխա, ս.թ. օգոստոսի 05-ին Ծովինար-Սևան-Ծովինար երթուղով 3/երեք/ ավտոբուսներով փոխադրում կատարելու համար:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Սևակ Դվոյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՍԵՐԳԵՅ ԲՈՒԹՈՅԱՆ